

ՀԱՐՑԱԶՈՐՈՅՑ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԵՆԵԱՆԻ ՀԵՏ

«ԱԶՂԱԿ».- Մեր ընթերցողները ծանօթ են Հայաստանի ամերիկեան համալսարանի գործունեության ձեզի հետ «Ազդակ»ի ունեցած նախորդ հարցազրույցներին: Այժմ հետաքրքրական է գիտնալ համալսարանի նորություններուն եւ ներկայ իրավիճակին մասին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԵՆԵԱՆ.- Համալսարանը այսօր զարգացման նոր փուլի մէջ է: 2007 տարեշրջանին համալսարանի հիմնական իրագործումը եղաւ ամերիկեան հաւատարմագրումը, որ շատ լաւ արդիւնք էր, որովհետեւ ընդհանրապէս այս առաջին հաւատարմագրումը կը տրուի առաւելագոյնը երեք-չորս տարուան համար, իսկ մեզի տրուեցաւ եօթը տարուան համար: Ասոր որպէս արդիւնք՝ կրթական կարգ մը ուղղութիւններ կան, որոնք արդէն իսկ զարգացման մէջ են: Առաջինը այն է, որ համալսարանը պէտք է ըլլայ բացառիկ հաստատութիւն մը ամբողջ տարածաշրջանին մէջ: Մենք կը յուսանք, որ յառաջիկայ տարիներուն պիտի յաջողինք ներգրաւել սփիւռքահայ երիտասարդութիւնը եւ մեր ուսանողներուն թիւը պիտի կրկնապատկուի արտաքին ուսանողութեան թիւով: Ես կը հաստատեմ, որ մեր համալսարանին մէջ որեւէ ծրագիր մը նոյն չափով եւ աւելի հետաքրքրական ու լաւ է, քան՝ որեւէ այլ ամերիկեան հաստատութեան ծրագիրները, որովհետեւ մենք համալսարանին մէջ ունինք որակաւոր դասախօսներ, որոնք բարձր վկայականներու արժանացած են աշխարհի զանազան կողմերէ եւ մեծ փորձառութիւն ունին իրենց գործունեութեան մէջ: Հետեւաբար, որպէս կրթական ուսուցում, մագիստրոսի մեր ծրագիրները ոչինչով կը զիջին ամերիկեան բարձրագոյն որեւէ համալսարանի: Համալսարանը իր հիմնադրութեան թուականէն մինչեւ օրս համաձայնութեան մէջ է եւ կապուած է Զալիֆորնիոյ համալսարանի ընդհանուր կառոյցին եւ այդ ուղղութեամբ է, որ մենք կը ստանանք ակադեմական որոշ հսկողութիւն: Մեր հոգաբարձութեան թիւին կէտը, մասնաւոր՝ ակադեմական ուղղութեամբ Զալիֆորնիոյ համալսարանի ուղղութեամբ է, իսկ մեր հոգաբարձութեան նախագահը Զալիֆորնիոյ համալսարանի ակադեմական ղեկավարն է:

«Ա.»- Ինչպէ՞ս են ձեր կապերը Պեյրութի ամերիկեան համալսարանին հետ:

Յ. Ա.- Ներկայիս գոյութիւն ունի կազմակերպութիւն մը, որ հետզհետէ տարիներու ընթացքին աւելի կը զօրանայ, այդ ալ ամերիկեան համալսարաններու համաշխարհային ցանցն է: Մօտ օրէն Գահիրէի մէջ ժողով ունինք, եւ ես այդ պատճառով է, որ եկած եմ: Ամերիկեան այդ համալսարաններու կազմակերպութեան կ'անդամակցին նաեւ Լիբանանէն երեք համալսարաններ՝ Պեյրութի ամերիկեան համալսարանը (Էյ.Եու.Պի.), Հայկազեան համալսարանը եւ Լիբանանի ամերիկեան համալսարանը (Էլ.Էյ.Եու.): Այդ կազմակերպութեան միջոցով մենք ունինք կառուցային որոշ կապեր: Սակայն մենք միշտ անհատական կապեր ունինք կարգ մը համալսարաններու հետ, որոնցմէ կարելորագոյնը Հայկազեան համալսարանի հետ մեր ունեցած յարաբերութիւնն է, որովհետեւ մենք նոյն ուղղութիւնները ունինք՝ ուսման որոշ տեսակետի:

«Ա.»- Իսոխնք Հայաստանի մէջ համալսարանին ունեցած ներդրումին մասին:

Յ. Ա.- Մեր համալսարանը 15-16 տարուան ընթացքին, այսինքն՝ իր հիմնադրութենէն ասդին, մագիստրոսի աստիճանով 1700 շրջանաւարտ տուած է: Հայաստանի նման փոքր երկրի մը մէջ, երբ այս թիւը կը տեսնենք, եթէ ներդրումային ձեւով պիտի դատենք, կը նշանակէ, թէ 100 միլիոնի հասնող ներդրում ունեցած է մեր համալսարանը, եթէ այդ ուսանողները միացեալ Նահանգներու կամ այլ երկիրներու մէջ պիտի ուսանէին եւ պիտի վերադառնային: Հոս կ'ուզեմ նշել, թէ մեր համալսարանը այսօր իր գործունեութեան թափը ոչ միայն ուսանողներուն թիւով կը հաշուէ, այլ ուսանողներէն անկախ, մեր ներդրումը Հայաստանի մէջ նաեւ ծրագրային եւ հետազօտական աշխատանքներուն մէջ է: Մենք ունինք 7 կեդրոններ՝ կենսոլորտի, առողջապահութեան եւ բնապահպանութեան, առողջապահական ուսումնասիրութիւններու, իրաւական, քաղաքական, առեւտրական, ճարտարագիտական հետազօտական կեդրոններ: Այս բոլոր կեդրոնները ունին իրենց յատուկ ծրագիրները՝ ըլլան անոնք երկրի զարգացման կամ հետազօտական ուղղութեամբ: Այս աշխատանքներու ծիրին մէջ է, որ համալսարանը ուղղակի իր ներդրումը կը կատարէ: Կերչերս համալսարանի հովանաւորի նախաձեռնութեամբ եւ համալսարանի կազմակերպութեամբ կարելոր ծրագիր մը իրագործուեցաւ, որ «Թրփանճեան» ծրագիրն էր: Այս մէկը գիւղական զարգացման ծրագիր է: Համալսարանը վերջին մէկ տարուան ընթացքին ունեցաւ երեք կեդրոններ՝ Շիրակի, Տաւուշի, Գիւմրիի, Իջեւանի եւ Ստեփանակերտի մէջ: Չիս ամենէն աւելի խանդավառող նոր ծրագիրներէն մէկն է ասիկա, որուն սահմանները հետեւեալներն են. առաջին՝ մենք կը մօտենանք գիւղացիներուն այս շրջաններուն մէջ եւ կը խնդրենք, որ մեզի ներկայացնեն որոշ

առեւտրական ծրագիրներ, այլ խօսքով՝ դիմումագիր ներկայացնեն, և մենք անոնց մէջէն կ'ընտրենք այն ծրագիրները, որոնք իրականանալու կարելիութիւնը ունին, և այդ ծրագիրներու հիման վրայ մենք կ'ընտրենք լսարան մը, և այն գիւղացիները, որոնք 40-50 տարեկան են, 3-4 շաբթուան ընթացքին իրենց ներկայացուցած գաղափարը կը վերածեն առեւտրական ծրագիրի, որ կը ներկայացուի դատական կազմի մը, որ իր կարգին բաղկացած է տեղական՝ դրամատան ներկայացուցիչ, զարգացման մարզի և այլ ներկայացուցիչներէ: Այդ ծրագիրներուն մէջէն կ'ընտրուին զանազան ծրագիրներ, որոնք մեր անմիջական և մասնագիտական օժանդակութեան, ինչպէս նաեւ վարկային դիւրութիւններու ստեղծման տակ կը սկսին գործունէութեան: Մինչեւ տարեվերջ կը յուսանք մօտ 150 ձեռնարկ յաջողցնել այս երեք շրջաններուն մէջ: Այս գործին մէջ մենք պիտի ներգրաւենք մեր համալսարանի ուսանողները, մեր շրջանաւարտները, որոնք հետաքրքրուած են և կ'ուզեն քաջալերել այդ շրջաններու ծրագիրները: Այս մօտեցումը տարբեր է, քան ինչ որ կ'ըլլայ կառավարութեան կամ արտաքին գործոց նախարարութեան կողմէ, որովհետեւ հիմնուած է անհատի վրայ և ոչ թէ համայնքի զարգացման վրայ: Ես կը հաւատամ, որ Յայաստան չի կրնար զարգանալ, եթէ այդ անհատ ձեռնարկատերերը գիւղերուն մէջ գոյութիւն չունենան: 15-20 տարիներէ ի վեր արտաքին օժանդակութիւններ կ'ըլլան գիւղերու զարգացման համար, բայց տնտեսութիւնը տեղէն չի շարժիր:

«Ա.» - Կրնա՞նք յայտելալ տեղեկութիւններ ունենալ համալսարանի նոր շէնքին վերաբերեալ:
Յ. Ա. - Յաջորդ քանի մը ամիսներու ընթացքին իր աւարտին կը հասնի նոր՝ «Աւետիսեան» շէնքը, որ մօտաւորապէս 10 հազար քառակուսի մետր տարածութեան վրայ կը գտնուի և հաւանաբար լաւագոյն համալսարանական կառոյցը պիտի ըլլայ ամբողջ շրջանին մէջ: Այդ ձեւով նաեւ կրնանք կրկնապատկել մեր ուսանողութեան թիւը և ուրիշներ ներգրաւել զանազան երկիրներէ: «Աւետիսեան» շէնքի այս կառոյցը համալսարանը կը դնէ նոր որակի և տեսակի մէջ, և նոյնիսկ ուսանողներուն մօտեցումը կը փոխուի:

«Ա.» - Ապագայ հեռանկարով, ի՞նչ ծրագիրներ կը փորձէ իրագործել համալսարանը:
Յ. Ա. - Ինծի համար, որպէս լիբանանահայու, որպէս սփիւռքահայու, շատ կարեւոր տեղ կը գրաւէ արեւմտահայ գրականութեան թուայնացման ծրագիրը: Մենք մինչեւ օրս ունինք դասական գրականութեան թուայնացումը, որ կը ներառէ 4-16րդ դարու հեղինակները: Իմ մտահոգութիւններէս մեկը այն է, որ մենք ունինք հսկայ արեւմտահայ գրականութիւն, սակայն անկէ օգտուողներուն թիւը հետզհետէ կը նուազի, և կորուստի վտանգի դիմաց գտնուող մեր արեւմտահայ գրականութիւնն է և ոչ թէ արեւելահայը: Այս պատճառով մենք մեկ ու կէս տարի առաջ ձեռնարկեցինք այս աշխատանքին և այսօր մօտաւորապէս 100 հազար էջ՝ 1850-2000 թուականը, արդէն իսկ թուայնացուած է և մինչեւ 2008-ի հոկտեմբերը կը յուսանք այս աշխատանքը որոշ չափով իր աւարտին հասցնել: Մենք ձեռնարկեցինք և կը յուսանք, որ Սփիւռքը կը շարունակէ օժանդակել այս գործին: Այդ թուայնացմամբ նաեւ մենք հսկայական կարելիութիւններ ունինք՝ օտար լեզուներու թարգմանուելու, հետազօտական աշխատանքներ տանելու և, անշուշտ, շատ աւելի դիւրին և հեշտ ձեւով: Յետեւաբար մեր համալսարանի մտահոգութիւններէն մեկն է մեր մշակոյթի ապագան: Իբրեւ ապագայ ծրագիր համալսարանը նաեւ իր գործունէութիւններուն մէջ պիտի ներառէ Յայաստանի շրջաններուն մէջ հեռակայ ուսուցման ծրագիր, նաեւ՝ կարճ դասընթացներու ծրագիր, որուն արդէն իսկ ձեռնարկած են մեր գիւղական զարգացման կեդրոնները: Յայաստանի կրթութեան մէջ մեծագոյն մարտահրաւերներէն մեկը, որ մեր գիւղական զարգացման ծրագիրի հիմքերէն մեկը կը կազմէ, այսօր ապագայ սերունդի զարգացման մասին մտածելն է, բայց ունինք սերունդ մը 35-70 տարեկան, որ յառաջիկայ 30-40 տարիներու ընթացքին տնտեսութեան մաս պիտի կազմէ: Այդ մարդիկը անցած են խորհրդային դպրոցէն և պատրաստ չեն այսօր տնտեսութեան արդար դերակատարները ըլլալու: Յետեւաբար մեծագոյն կրթական հարցը ներկայիս Յայաստանի մէջ վերադաստիարակման հարցն է և այս մասին մտածող չկայ:

«Ա.» - ԼՕԽ-ի «Արաքսի Պուլլորճեան» ընկերաբժշկական կեդրոնի Կալա-ձեռնարկին դուք հիւր-բանախօսն էիք: Ի՞նչ ունիք ըսելիք ԼՕԽ-ի գործունէութեան մասին՝ թե՛ արժեւորման և թե՛ ապագայի հեռանկարով:

Յ. Ա. - ԼՕԽ-ի «Արաքսի Պուլլորճեան» կեդրոնը մեծ կարելիութիւններով մեծ զարգացում ստացաւ, ամբողջական առողջապահական կեդրոն մը ըլլալու մտայնացքը իրականացուց և ոչ միայն դարմանումի և բժշկութեան, այլև կանխարգիլման ուղղութեամբ համայնքի մէջ աշխատանք

տանելով:

Ես կ'ուզեմ ըսել, որ ապագայի հեռանկարով պետք է աշխատանք տարուի ամողջութիւն կերտելու մէջ: Այս մէկը բոլորովին տարբեր հասկացողութիւն է: Չենք կրնար միայն կանխարգիլումով բուժել, այլ նաեւ պետք է ներկայ հիւանդութիւններուն մէջ ամողջութիւն կերտել: Կը յուսամ, որ այս կեդրոնը յառաջիկայ տասնամեակին ըլլայ ոչ միայն ամէնօրեայ հիւանդներ դարմանող, բուժող եւ կանխարգիլող, այլեւ ծրագրային նոր աշխատանքներու ծիրին մէջ փորձէ կերտել ժողովուրդին ամողջութիւնը: Այս մէկը շատ անելի հետաքրքրական նորութիւն մըն է ապագայի հեռանկարով:

Հարցազրոյցը վարեց՝
ՄԱՐԱԼ ՄԻՍԵԱՆ